ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼԻԼԻԹ ԳԱՐԻԿԻ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Ը .00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն»
մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Աղասու Թավադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Ալբերտի Սարգսյան

տնտեսագիտության թեկնածու
Ռոլան Ժորժիկի Մնացականյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունիսի 28-ին ժամը 13: 30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0025, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թվականի մայիսի 25-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար

տեխ.գիտ.դոկտոր,պրոֆեսոր Ա.Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Գլոբալ անհավասարության բարձր մակարդակի և առանձին երկրների ներսում սոցիալական բևեռացվածության խորացման շարունակական աճի պայմաններում առանցքային է դառնում բնակչության եկամուտների բաշխման բազմակողմանի ուսումնասիրության խնդիրը: Վերջինս կարևորվում և դիտարկվում է ինչպես առանձին տնտեսագետների, հետազոտական ինստիտուտների և կազմակերպությունների կողմից, այնպես էլ հանդիսանում է Համաշխարհային բանկի և Միավորված ազգերի կազմակերպություն ռազմավարական նպատակների բաղկացուցիչ մասը: Ընդ որում, հավասարապես կարևորվում է եկամտային անհավասարության ուսումնասիրությունը և՛ առանձին երկրների մակարդակով,և՛ համաշխարհային մակարդակով:

Բնակչության եկամուտների բաշխման խորը և բազմակողմանի ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կառուցման տեսանկյունից:Այն հնարավորություն է տալիս ճիշտ պատկերացում ունենալ բնակչության կենսամակարդակի, առկա սոցիալական անհավասարությունների վերաբերյալ, որոնց վրա հիմնվելով մշակվում են համապատասխան քաղաքականության միջոցառումներ՝ որպես թիրախ ընտրելով բնակչության համապատասխան խումբը: Այսպիսով, երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության ճիշտմշակման և իրականացման արդյունքները բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հանդիսանում բնակչության եկամուտները և վերջիններիս բաշխվածության մակարդակը՝ ըստսոցիալական տարբեր խմբերի:

Հարկաբյուջետային քաղաքականության մաս հանդիսացող եկամուտների վերաբաշխման գործընթացի արդյունավետ իրականացումը ևս պահանջում է եկամուտների բաշխման

բազմակողմանի ուսումնասիրություն, բաշխումը պայմանավորող գործոնների, օրինաչափությունների բացահայտում: Եկամուտների բաշխումը դիտարկվում է նաև որպես աղքատության մակարդակի և տնտեսական աճի դինամիկ զարգացումների վրա էական ազդեցություն ունեցող գործիք:

Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականին գրանցված տնտեսական խորը անկումն իր էական և շարունակական ազդեցությունն է ունեցել բնակչության եկամուտների բևեռացվածության խորացման վրա. 2009 թվականից ի վեր անհավասարության մակարդակն աճի միտում է դրսևորել: Եվ չնայած վերջին տարիներին երկրում աղքատության մակարդակը նվազել է, անհավասարության մակարդակը դեռևս մեղմ տեմպերով շարունակում է աճել: Արդեն 2016 թվականին անհավասարության Ջինիի գործակիցը կազմում է 37.5 տոկոս՝ գերազանցելով նախաճգնաժամային մակարդակը 3.6 տոկոսային կետով:Խնդիրը կարևորվում և մատնանշվում է նաև երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության համատեքստում:Աղքատության կրճատումը և եկամուտների բաշխման անհավասարության մեղմումը ներկայումս հանդիսանում են ՀՀ կառավարության որդեգրած սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններից, որում անհավասարության կրճատումը դիտարկվում է որպես մարդկային կապիտալի զարգացման գրավական: Հետևաբար շատ կարևոր է ՀՀ բնակչության եկամուտների բաշխումն ուսումնասիրել բազմակողմանիորեն, բացահայտել բաշխման կառուցվածքի վրա ազդող գործոնները և գնահատել վերջիններիս բնույթն ու ազդեցությունը, որը թույլ կտա բարձրացնել սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետությունը:

Այսպիսով, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ հիմնավորումներով, որոնք մատնանշում են գիտականորեն հիմնավորված

ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը համաշխարհային փորձի, ՀՀ բնակչության եկամուտների բաշխման առանձնահատկությունների, այդ գործընթացում նշանակալի դերակատարում ունեցող գործոնների ուսումնասիրության միջոցով ՀՀ բնակչության եկամուտների բաշխման տնտեսամաթեմատիկական մոդելավորումը և համապատասխան գնահատականների ստացումն է: Վերջինիս իրագործման համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել բնակչության եկամուտների բաշխման վերլուծության հիմնական սկզբունքները, տարբեր տնտեսագետների կողմից առաջ քաշված մոտեցումները և մեթոդները,
- հիմնավորել և ներկայացնել եկամուտների բաշխման ուսումնասիրության կարևորությունը երկրի տնտեսության զարգացման տեսանկյունից, կարևորել եկամուտների բաշխման ուսումնասիրության անհրաժեշտությունը երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետմշակման և իրականացման համար,
- վերլուծել ՀՀ-ում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը՝ ներկայացնելով եկամուտների բաշխումը կարգավորող գործիքակազմը,
- ուսումնասիրել և ներկայացնել եկամուտների բաշխման տնտեսամաթեմատիկական մոդելավորման և գնահատման համար համաշխարհային պրակտիկայում կիրառվող մեթոդները և մոտեցումները,
- բացահայտել ՀՀ բնակչության եկամուտների բաշխման վրա ազդող հիմնական գործոնները, դրանց առանձնահատկությունները, գնահատել վերջիններիս ազդեցության բնույթը և չափը,
- կանխատեսել ՀՀ-ում եկամուտների բաշխման

անհավասարության մակարդակի զարգացումները:

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության եկամուտներն են, իսկ հետազոտության առարկան ՀՀ բնակչության եկամուտների բաշխման գնահատման համար կիրառվող տնտեսամաթեմատիկական մեթոդները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը: Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տարբեր հեղինակների աշխատություններ, գիտական հոդվածներ, օրենսդրական, ռազմավարական և քաղաքական փաստաթղթեր, առցանց աղբյուրներ: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության միկրոտվյալների բազաները (ըստ տնային տնտեսությունների և ըստ տնային տնտեսության անդամների), հրապարակումները և տարեգրքերը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունները և օրենքները, համաշխարհային բանկի տվյալների բազան: Հետազոտությունն իրականացվել է վիճակագրական և էկոնոմետրիկ վերլուծությունների կիրառմամբ, իսկ արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են մոդելների, գծապատկերների և աղյուսակների տեսքով:

Ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում հետևյալները.

- Իրականացվել է ՀՀ-ում սոցիալ-տնտեսական քաղաքականության շրջանակի

վերլուծություն՝ բնակչության եկամուտների բաշխման տեսանկյունից: Բացահայտվել է կիրառվող հիմնական քաղաքականության գործիքների և եկամուտների բաշխման անհավասարության մակարդակի միջև փոխազդեցության բնույթը, գնահատվել է քաղաքականության միջոցառումների արդյունավետությունը:

- Եկամուտների բաշխման ուսումնասիրության տնտեսամաթեմատիկական մոտեցումները դասակարգվել և ներկայացվել են ըստ 4 խմբերի՝ անհավասարության ինդեքսներ, միկրոտնտեսական հետազոտության մեթոդներ, մակրոտնտեսական հետազոտության մեթոդներ և խառը մեթոդներ (միկրո-մակրո հետազոտության մեթոդների համակցում): Կատարվել է մեթոդների համեմատական վերլուծություն:
- Առաջարկվել է անհավասարության մակարդակի ուսումնասիրման և գնահատման տնտեսամաթեմատիկական քայլերի հաջորդականություն՝ անհավասարության ինդեքսների և Օքսակա-Բլինդերյան մեթոդի համակցմամբ: Իրականացվել է ՀՀ-ում եկամուտների բաշխման համապարփակ ուսումնասիրություն և գնահատում, միկրո (տնային տնտեսության) մակարդակով գնահատվել է եկամուտների անհամաչափ բաշխումը պայմանավորող հիմնական սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը:
- Մշակվել են անհավասարության մակարդակի կանխատեսման սցենարներ, որոնց հիմքում անհավասարության մակարդակի էլաստիկության գործակիցներն են ըստ եկամտի տեսակների և անվանական ՀՆԱ-ի աճի կանխատեսումները: Տրվել են եկամուտների բաշխման անհավասարության մակարդակի սպասվող փոփոխությունների գնահատականներ:
- Առաջարկվել է ՀՀ բնակչության ըստ եկամտային խմբերի դասակարգման նոր մոտեցում, որի հիմքում բնակչության

պայմանական խմբերում եկամուտների՝ միջին եկամտից նվազագույն շեղումն է: Ըստայդմ ՀՀ բնակչությունը դասակարգվել է ըստ ցածր, միջին և բարձր եկամտային խմբերի:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում մշակված և ներկայացված մաթեմատիկական մեթոդները և մոդելները հնարավորություն են տալիս բազմակողմանիորեն ուսումնասիրել եկամուտների բաշխման տարբերությունները պայմանավորող գործոնների բնույթը և ազդեցության չափը ինչպես ժամանակի ընթացքում՝ դինամիկ փոփոխությունները, այնպես էլ՝ բնակչության առանձնացված տարբեր խմբերի միջև: Ստացված գնահատականները կարող են հենք հանդիսանալ սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակողների համար և կիրառվել ՀՀ կառավարության կողմից քաղաքականության մշակման և արդյունավետության գնահատման համատեքստում: Ատենախոսության շրջանակներում ստացված գնահատականները կարող են ուղղորդիչ դեր ունենալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տարբեր ծրագրերի շահառու խմբերի նպատակային թիրախավորման և սոցիալական արդի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներն առավել արդյունավետ իրականացնելու համար, ինչպես նաև՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից՝ մարդկային կապիտալի հետևողական զարգացմանն ուղղված քայլերի մշակման և ընթացիկ մշտադիտարկման համար:

Ատենախոսությունում եկամուտների բաշխման անհավասարության մակարդակի ուսումնասիրման և գնահատման տնտեսամաթեմատիկական քայլերի հաջորդականությունը՝ անհավասարության մակարդակի դիտարկումն ըստ տարբեր սոցիալ-տնտեսական գործոնների, որպես մեթոդական մոտեցում կարող է կիրառվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան պարբերականությամբ

հրապարակվող վիճակագրական-վերլուծական զեկույցում անհավասարության մակարդակի համապարփակ վերլուծության և ներկայացման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը: Ատենախոսությունը ներկայացվել և քննարկվել է ՀՊՏՀ Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնում: Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի 6 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հապավումների ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 116 տպագիր էջերի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվել են տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, հիմնական արդյունքները և գիտական նորույթը, վերջիններիս գործնական նշանակությունը, ինչպես նաև՝ աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Բնակչության եկամուտների բաշխման համակարգման սկզբունքները»** գլխում ուսումնասիրվել և ներկայացվել են բնակչության եկամուտների բաշխմանն առնչվող հիմնական մոտեցումները, տնտեսական մտքի զարգացման համատեքստում այդ սկզբունքների ձևափոխություններն ու վերաձևակերպումները: Որպես եկամուտների բաշխման ուսումնասիրության առանցքային տարր՝ անրադարձ է կատարվել եկամուտների

բաշխման և տնտեսական աճի հարաբերակցությանը: Մասնավորապես ուսումնասիրվել է Հայաստանի պարագայում տնտեսական աճի և եկամուտների բաշխման հարաբերակցությունը, ըստ որի՝ Հայաստանում նշված ցուցանիշների միջև կապի բնույթը միանշանակ չէ և կախված է դիտարկվող ժամանակահատվածից: Բաժինը ամփոփվել է Հայաստանում եկամուտների բաշխման կարգավորմանն ուղղվող սոցիալ-տնտեսական քաղաքականության վերլուծությամբ, կառավարության կողմից կիրառվող հիմնական գործիքների ազդեցության բնույթի և արդյունավետության գնահատամբ:

Անդրադառնալով ՀՀ-ում եկամուտների բաշխման անհավասարության մեղմմանը միտված սոցիալ-տնտեսական քաղաքականության դրույթներին՝ ուսումնասիրվել և վերլուծվել են ռազմավարական փաստաթղթերում մատնանշվող նպատակային ուղղությունները և վերջիններիս իրականացման համար կիրառվող գործիքակազմը: Ըստ վերլուծության արդյունքների՝ քաղաքականության հիմնական ուղղություններ են հանդիսանում սոցիալական տրանսֆերտների և սոցիալական ուղղվածություն ունեցող բյուջետային ծախսերի աճը, հարկային բարեփոխումները և նվազագույն աշխատավարձի չափի համապատասխանեցումը սպառողական զամբյուղի արժեքին: Ընդ որում, ուղղակի և կարճաժամկետ ազդեցությամբ էական դերակատարում ունեն պետական տրանսֆերտները, մասնավորապես՝ կենսաթոշակները և կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները: 2008-2016 թվականների ընթացքում կենսաթոշակների վճարումը հնարավորություն է տվել կրճատել անհավասարության մակարդակը տարեկան մոտ 6.9 տոկոսային կետով, իսկ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարումը՝ 1.4 տոկոսային կետով: Անուղղակի, սակայն երկարաժամկետ ազդեցությամբ առանձնանում են կրթական և առողջապահական ոլորտին ուղղվող պետական ծախսերը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բնակչության եկամուտների բաշխման վերլուծության տնտեսամաթեմատիկական մեթոդները»** գլխում ներկայացվել են տնտեսագիտական գրականությունում առավել տարածված և համաշխարհային պրակտիկայում կիրառվող եկամուտների բաշխման գնահատման մեթոդները: Վերջիններիս համադրությամբ, թույլ և ուժեղ կողմերի վերլուծությամբ ընտրվել են այն հիմնական մեթոդները, որոնք առավել նպատակահարմար են Հայաստանում բնակչության եկամուտների բաշխման գնահատման համար: Արդյունքում, առաջարկվել է ՀՀ բնակչության եկամուտների բաշխման գնահատման համար զուգահեռ կիրառել անհավասարության ինդեքսները՝ մասնավորապես Ջինիի գործակիցը և Թեյլի էնտրոպիան, և միկրոտնտեսական հետազոտության մեթոդները՝ մասնավորապես Օքսակա-Բլինդերյան տարանջատման մեթոդը:

Առաջարկվող մեթոդական մոտեցումը՝ անհավասարության մակարդակի գնահատման տնտեսամաթեմատիկական քայլերի հաջորդականությունը, հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն ուսումնասիրել բնակչության եկամուտների բաշխման առանձնահատկությունները և օրինաչափությունները՝ վերհանելով անհամաչափ բաշխումը պայմանավորող հիմնական սոցիալ-տնտեսական գործոնները: Մասնավորապես՝

1. Ջինիի անհավասարության գործակիցն ամբողջությամբ տրոհելի է ըստ եկամուտների տեսակների և թույլ է տալիս գնահատել յուրաքանչյուր եկամտի տեսակի մասնակցությունն անհավասարության մակարդակի ձևավորման մեջ.

$$G = \frac{2}{\bar{y}n^2}\sum_{i=1}^{n}\left(r_i - \frac{n+1}{2}\right)y_i = \sum_{k=1}^{K}\frac{\bar{y}_k}{\bar{y}}G_k^* = \sum_{k=1}^{K}S_k G_k^*$$

$$P_k = S_k\frac{G_k^*}{G_k}\times 100\% \text{ և } \epsilon_{G,S_k} = \frac{S_k(G_k^* - G)}{G}$$

որտեղ n-ը հասարակության անդամների կամ տնայինտնտեսությունների քանակն է, y_i-ն՝ i-րդ անդամի

(տնային տնտեսության) եկամուտն է, $\bar{y}$-ը միջին եկամուտն է, r_i-ն i-րդ անդամի (տնային տնտեսության) կարգն է եկամուտների սանդղակում: G_k^*-ը եկամտի k-րդ բաղադրիչի կոնցենտրացիայի գործակիցն է, S_k-ն k-րդ բաղադրիչի կշիռն է ամբողջ եկամտում, P_k-ն k-րդ բաղադրիչի տոկոսային մասնակցությունն է եկամտային անհավասարության մեջ, ϵ_{G,S_k}-ն Ջինիի գործակցի էլաստիկությունն է ըստ S_k-ի [1]:

2. Թեյլի էնտրոպիան ամբողջությամբ տրոհելի է ըստ առանձնացված ենթախմբերի՝ հնարավորություն տալով գնահատել ինչպես միջխմբային (I_B), այնպես էլ ներխմբային անհավասարաության (I_W) դերն ընդհանուր անհավասարության կառուցվածքում:

$$T = \frac{1}{n}\sum_{i=1}^{n}\left(\frac{y_i}{\bar{y}}\right) ln\left(\frac{y_i}{\bar{y}}\right) = \sum_{j=1}^{G}\frac{n_j}{n}\cdot\frac{\bar{y}_j}{\bar{y}}T_j + \sum_{j=1}^{G}\frac{n_j}{n}\cdot\frac{\bar{y}_j}{\bar{y}} ln\left(\frac{\bar{y}_j}{\bar{y}}\right) = I_W + I_B$$

որտեղ բնակչությունը մասնատվել է G խմբերի (j=1,2,…,G), իսկ T_j-ն j-րդ խմբի համար հաշվարկված Թեյլի էնտրոպիան է [2]:

3. Օքսակա-Բլինդերյան մեթոդի հիմքում ընկած է բնակչության տարբեր խմբերի կամ տարբեր ժամանակահատվածներում եկամուտների միջինների համեմատությունը և թույլ է տալիս գնահատել եկամուտների միջինների տարբերությունը պայմանավորող հիմնական գործոնների ազդեցության չափերը: Մեթոդի կիրառության համար անհրաժեշտ է կառուցել գծային ռեգրեսիոն հավասարում, այն գնահատել դիտարկվող tև՛ տարբեր ժամանակահատվածներում ուսումնասիրված i ($i = \overline{1,N}$) և j ($j = \overline{1,M}$) տնային տնտեսությունների (կամ առանձնացված բնակչության խմբերի) համար և հաշվարկել հավասարումների գնահատման արդյունքում ստացված միջին եկամտի փոփոխությունը.

$$Y_{it} = \alpha_t + X_{it}\cdot\beta_t + \varepsilon_{it}, \qquad i = \overline{1,N}$$

[1] Jones C., Revenga A. and others "Making Transition Work for Everyone: Poverty and Inequality in Europe and Central Asia", Appendix A, The World Bank, October 2000, pages 374-375.

[2] Bellù L. G., Liberati P. "Policy impacts on inequality: Decomposition of income inequality by subgroups", FAO, EASYPol Module 052, December 2006, page 9.

$$Y_{jt'} = \alpha_{t'} + X_{jt'} \cdot \beta_{t'} + \varepsilon_{jt'}, \qquad j = \overline{1,M}$$

$$\Delta\bar{Y} = \bar{Y}_{t'} - \bar{Y}_t = \underbrace{(\bar{X}_{t'} - \bar{X}_t)\hat{\beta}_{t'}}_{Q} + \underbrace{(\hat{\alpha}_{t'} - \hat{\alpha}_t) + \bar{X}_t(\hat{\beta}_{t'} - \hat{\beta}_t)}_{U} = Q + U$$

որտեղ՝ Y-ը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով եկամուտն է, X-ը տնային տնտեսությունը բնութագրող ցուցանիշների վեկտորն է, β գործակիցը X ցուցանիշների ներդրման բաժինն է եկամտի մեջ, ε-ը մոդելի մնացորդն է, որում ամփոփված են տնային տնտեսությունը բնութագրող չուսումնասիրված ցուցանիշները[3]:

Ստացված հավասարման աջ մասի առաջին անդամը ներկայացնում է բնակչության ընտրված խմբերի միջև առկա ճեղքի այն մասը, որը պայմանավորված է ընտրված անկախ ցուցանիշների տարբերություններով (քանակական փոփոխության ազդեցություն): Իսկ երկրորդ անդամը բնութագրում է ռեգրեսիոն հավասարումների գործակիցների տարբերությամբ կամ ընտրված ցուցանիշներից բխող հետևանքներով (արդյունքով) պայմանավորված մասը: Հավասարման Q անդամը համարվում է ճեղքի «բացատրվող» մասը, իսկ Uանդամը՝ «չբացատրվող» մասը:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ բնակչության եկամուտների բաշխման գնահատումը»** գլխում գնահատվել և վերլուծվել են ՀՀ-ում առկա անհավասարության մակարդակը, վերջինս պայմանավորող գործոնները, բնակչության առանձին խմբերի միջև առկա եկամտային տարբերությունները պայմանավորող սոցիալ-տնտեսական գործոնները, ժամանակի ընթացքում եկամուտների բաշխման կառուցվածքային տեղաշարժերը, ինչպես նաև մշակվել են սցենարներ ՀՀ բնակչության եկամուտների բաշխման բևեռացվածության մակարդակի կանխատեսման համար և առաջարկվել է բնակչության ըստ եկամուտների դասակարգման նորմոտեցում:

Ատենախոսությունում եկամուտների բաշխման կառուցվածքային առանձնահակությունների

[3] Jann B. "A Stata implementation of the Blinder-Oaxaca decomposition", May 2008, the Stata Journal 8(4), pages 453-479.

գնահատման համար կիրառվել են անհավասարության Ջինիի գործակիցը և Թեյլի էնտրոպիան, որոնք տրոհվել են ըստեկամուտների ձևավորման աղբյուրների, տարածաշրջանային և տնային տնտեսությունը բնութագրող տարբեր սոցիալ-տնտեսական գործոնների: Ջինիի գործակիցը 2016 թվականին կազմել է 38.6 տոկոս՝ պահպանելով վերջին տարիներին ձևավորված աճի միտումը: Երկրում բևեռացվածության այսպիսի մակարդակը գերազանցապես պայմանավորված է եկամուտների 3 տեսակներով՝ վարձու աշխատանքից ստացվող եկամտով (70.8 տոկոս), ինքնազբաղվածությունից եկամտով (12.4 տոկոս) և տրանսֆերտներով (8.6 տոկոս): Ընդ որում, եթե ընդամենը եկամտում վարձու աշխատանքից եկամտի կշռի 1 տոկոս աճը հանգեցնում է անհավասարության մակարդակի 0.18 տոկոս ավելացմանը, ապա պետական տրանսֆերտները հակազդող գործառույթ են իրականացնում՝ 1 տոկոս աճը հանգեցնում է անհավասարության 0.13 տոկոսով կրճատմանը:

Հարկ է նշել, որ մշակված կանխատեսման սցենարների համաձայն ՀՀ-ում անհավասարության մակարդակն առաջիկա տարիներին ևս պահպանելու է ձևավորված աճի միտումը (տե՛ս գծապատկեր 1): Սցենարների հիմքում դրվել են անհավասարության մակարդակի՝ ըստ եկամտի տեսակների էլաստիկության գործակիցները և անվանական ՀՆԱ-ի աճի կանխատեսումներն ըստ ՀՀ կառավարության (սցենար 1) ու Արժույթի միջազգային հիմնադրամի (սցենար 2):

Գծապատկեր 1.Ջինիի անհավասարության գործակցի կանխատեսումը, տոկոս



Հայաստանում եկամուտների անհավասարաչափ բաշխվածության վրա նշանակալի է նաև տարածաշրջանային գործոնի ազդեցությունը: Մասնավորապես բնակչության վարչատարածքային տարանջատմամբ պայմանավորված է ՀՀ-ում եկամուտների բևեռացվածության 12.7 տոկոսը: Ընդհանուր անհավասարության մակարդակի վրա ունեցած դերակատարմամբ առանձնանում է Երևան քաղաքը, իսկ եկամտային բևեռացվածության խորությամբ՝ գյուղական բնակավայրերը:

ՀՀ բնակչության եկամուտների բաշխման դինամիկ փոփոխությունները և վերջիններս պայմանավորող սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը գնահատելու համար կառուցվել է գծային ռեգրեսիոն մոդել, ապա կիրառվել է Օքսակա-Բլինդերյան տարանջատման մեթոդը: Հաշվի առնելով 2009 թվականի ճգնաժամի էական և շարունակական ազդեցությունը ՀՀ-ում բնակչության եկամուտների բևեռացվածության խորացման վրա՝ 2016 թվականի տվյալները համեմատվել են 2008 թվականի նախաճգնաժամային մակարդակի հետ: Հարկ է նշել, որ 2 տարիների դեպքում էլ մոդելները կառուցվել են հիմքում ունենալով ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվող ՏՏԿԱՀ բազաները: Այսպիսով, բնակչության եկամուտների շարժի գնահատման համար կիրառվել է ստորև բերված մոդելը, որում որպես էնդոգեն փոփոխականներ դիտարկվել են ՏՏ-ի կառուցվածը, տնտեսական ակտիվությունը, կրթությունը, եկամուտների տեսակները և կենցաղային պայմանները բնութագրող 15 ցուցանիշներ.

$$ln(Y_i) = \alpha + \beta_1\, ln(N_i) + \beta_2 EM_i + \beta_3 UEM_i + \beta_4 HEW_i + \beta_5 CH_i + \beta_6 EL_i + \beta_7 DA_i +$$

$$+\beta_8 HE_i + \beta_9 HS_i + \beta_{10} Hage_i + \beta_{11} YR_i + \beta_{12} TR_i + \beta_{13} SL_i + \beta_{14} DC_i + \beta_{15} HW_i + \varepsilon_i$$

որտեղ՝

- $ln(Y_i)$-ն i-րդ ՏՏ-ի մեկշնչի հաշվով ամսական եկամտի բնական հիմքով լոգարիթմն է,
- $\ln(N_i)$-ն i-րդ ՏՏ-ի անդամների քանակի բնական հիմքով լոգարիթմն է,
- EM_i-ն i-րդ ՏՏ-ի զբաղված անդամների կշիռն է աշխատանքային տարիքի (15-75 տարեկան) անդամների թվաքանակի մեջ,
- UEM_i-ն i-րդ ՏՏ-ի գործազուրկ անդամների կշիռն է աշխատանքային տարիքի (15-75 տարեկան) անդամների թվաքանակի մեջ,
- HEW_i-ն i-րդ ՏՏ-ի բարձրագույն կրթություն ունեցող աշխատողների կշիռն է աշխատող անդամների կառուցվածքում,
- CH_i-ն i-րդ ՏՏ անդամների կառուցվածքում երեխաների (0-17տարեկան)կշիռն է,
- EL_i-ն i-րդ ՏՏ-ի անդամների կառուցվածքում 63 և բարձր տարիքի անձանց (տարեցների)կշիռն է,
- DA_i-ն i-րդ ՏՏ-ի անդամների կառուցվածքում 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամների և հաշմանդամ երեխաների կշիռն է,
- HE_i-ն i-րդ ՏՏ-ի գլխավորի կրթական մակարդակը բնութագրող կատեգորիկ փոփոխական է,
- HS_i-u i-րդ ՏՏ-ի գլխավորի սեռը բնութագրող փոփոխական է, որն ընդունում է 1 արժեքը, եթե գլխավորը տղամարդ է և 0արժեքը,եթե՝ կին է:
- $Hage_i$-u i-րդ ՏՏ-ի գլխավորի տարիքն է:
- YE_i-ն i-րդ ՏՏ-ի բնակավայրը նկարագրող փոփոխական է, որը ընդունում է 1 արժեքը, եթե տնային տնտեսությունը բնակվում է Երևան քաղաքում և 0արժեքը,եթե՝ այլ բնակավայրում:
- TR_i-ն ընդունում է 1 արժեքը, եթե i-րդ ՏՏ-ն տվյալ ժամանակահատվածում ստացել է դրամական օգնություն (տրանսֆերտ) Հայաստանում կամ Հայաստանից դուրս ապրող բարեկամներից, և 0 արժեքը,եթե՝ չի ստացել:

- SL_i-ն ընդունում է 1 արժեքը, եթե i-րդ ՏՏ-ն տվյալ ժամանակահատվածում ունեցել է վարձու աշխատանքից կամ ինքնազբաղվածությունից եկամուտ, և 0 արժեքը, եթե՝ չի ունեցել:
- DC_i-ն i-րդ ՏՏ բնակարանային պայմանների սուբյեկտիվ գնահատականը նեկայացնող կատեգորիկ փոփոխական է, որն ընդունում է 1-5 (շատ վատից շատ լավ) արժեքները:
- HW_i-ն վերջին 12 ամիսների ընթացքում i-րդ ՏՏ-ի կողմից տնային տնտեսության վարման համար աշխատողներ վարձելու հանգամանքը ներկայացնող փոփոխական է, որն ընդունում է 1 արժեքը, եթե ՏՏ-ն վարձել է աշխատողներ և 0 արժեքը՝ եթե աշխատողներ չի վարձել:
- $\beta_1, \beta_2, \dots, \beta_{15}$-ը մոդելում ներառված անկախ փոփոխականների գործակիցներն են:
- α-ն մոդելի ազատանդամն է:
- ε_i-ն մոդելի սխալն է i-րդ ՏՏ-ի դեպքում:

Ստացված արդյունքների համաձայն 2016 թվականին 2008-ի նկատմամբ ՏՏ մեկ շնչի հաշվով միջին եկամտի տարբերության ավելի քան 21 տոկոսը պայմանավորված է մոդելում ներառված անկախ փոփոխականների միջինների փոփոխությամբ: Հատկապես նշանակալի դերակատարում են ունեցել ՏՏ կառուցվածքի փոփոխությունը՝ անդամների թվաքանակի կրճատումը ի հաշիվ երեխաների կշռի նվազման, ՏՏ գլխավորի կրթական մակարդակի բարձրացումը և զբաղվածների կառուցվածքում բարձրագույն կրթությամբ անձանց կշռի աճը: Նշված գործոններից յուրաքանչյուրը նաև որոշակի մասնակցություն ունի եկամուտների բաշխման անհավասարության մակարդակի ձևավորման գործում: Սակայն, եթե ՏՏ մեկ շնչի հաշվով եկամտի մակարդակի փոփոխության մեջ շատ ավելի ակնառու է ՏՏ դեմոգրաֆիական կառուցվածքի փոփոխությունը, ապա անհավասարության մակարդակի վրա առավել էական է ՏՏ անդամների կրթական մակարդակը և տնտեսական ակտիվությունը՝ զբաղված լինելու հանգամանքը:

Նույն մեթոդով գնահատվել է նաև բնակչության աղքատ և ոչ աղքատ խմբերի միջև առկա եկամտային տարբերությունները պայմանավորող գործոնների ազդեցությունը: Այս պարագայում որպես բազային մոդել դիտարկվել է հետևյալ մոդելը.

$$ln(Y)_i = \alpha_i + \beta_{i1}EM_i + \beta_{i2}UEM_i + \beta_{i3}HEW_i + \beta_{i4}HHage_i + \beta_{i5}HE_i +$$

$$+\beta_{i6}YR_i + \beta_{i7}TR_i + \beta_{i8}SL_i + \beta_{i9}DC_i + \beta_{i10}HW_i + \varepsilon_i$$

Տարանջատման արդյունքների համաձայն՝ ընտրված սոցիալ-տնտեսական գործոնները պայմանավորում են ոչ աղքատ և աղքատ ՏՏ-ների մեկ շնչի հաշվով միջին եկամտի մակարդակների տարբերության 42.1 տոկոսը: Նշանակալի դերակատարում ունեն ՏՏ միջին տարիքը, Հայաստանում կամ Հայաստանից դուրս ապրող բարեկամների/հարազատների կողմից տրամադրվող դրամական օգնության առկայությունը, ՏՏ-ում գործազուրկների կշիռը և զբաղված անդամների կշիռները, ՏՏ-ում վարձու աշխատանքից կամ ինքնազբաղվածությունից եկամտի առկայությունը:

Հիմնվելով բնակչության առանձին խմբերի միջև առկա բևեռացվածության և յուրաքանչյուր խմբում միջին եկամտից ՏՏ մեկ չափահասի հաշվով եկամտի մակարդակի նվազագույն շեղման վրա՝ ատենախոսության շրջանակներում իրականացվել է ՀՀ բնակչության դասակարգումը ստացած, միջին և բարձր եկամտային խմբերի, ապագնահատվել է այդ խմբերից յուրաքանչյուրին բաժին ընկնող եկամտի մակարդակը: Ըստ հետազոտության արդյունքների՝ բնակչության բարձր եկամտային խումբը (6 տոկոսը) տիրապետում է ՀՀ բնակչության եկամուտների 20 տոկոսին, միջին եկամտային խումբը (24 տոկոսը)՝ 37 տոկոսին, իսկ ցածր եկամտային խումբը (70 տոկոսը)՝ 43 տոկոսին: Այս 3 խմբերի տարանջատմամբ ձևավորվում է երկրում առկա անհավասարության մակարդակի 78.2 տոկոսը:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ամփոփ կերպով ներկայացվել են իրականացված հետազոտության արդյունքում կատարված հիմնական եզրահանգումները.

- Եկամուտների բաշխման հիմնախնդրի ուսումնասիրության մոտեցումները ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվել: Եթե տնտեսական մտքի զարգացման հիմնական դպրոցների ներկայացուցիչները եկամուտների բաշխումը գերազանցապես դիտարկում էին ֆունկցիոնալ բաշխման տեսանկյունից, ապա 20-րդ դարի 70-80-ական թվականներից տնտեսագետները սկսեցին իրենց ուշադրությունը սևեռել եկամուտների անհատական բաշխման վրա: Միևնույն ժամանակ, ազգային մակարդակից աստիճանաբար անցում կատարվեց համաշխարհային մակարդակի և առաջ քաշվեց «Գլոբալ անհավասարություն» հասկացությունը:
- 1970-1980-ական թվականներին եկամուտների բաշխման ուսումնասիրություններում առանցքային խնդիր էր հանդիսանում գլոբալ անհավասարության շարունակական աճի միտումը, իսկ 1990-ական թվականներից ի վեր առաջնային է դառնում անհավասարության դեռևս բարձր մակարդակը՝ ՀԲ գնահատականներով 2013 թվականին կազմել է 62.5 տոկոս, և առանձին երկրների ներսում բևեռացվածության խորացումը:
- Եկամուտների բաշխումը դիտարկվում է նաև որպես տնտեսական աճի դինամիկ զարգացումների վրա էական ազդեցություն ունեցող գործիք: Ոլորտին առնչվող հետազոտությունները մատնանշում են եկամուտների անհավասարաչափ բաշխման և տնտեսական աճի միջև էական կապի առկայությունը, սակայն կապի բնույթի վերաբերյալ կարծիքները հակասական են և պայմանավորված են ուսումնասիրվող երկրի առանձնահատկություններով: Հայաստանի պարագայում ևս եկամուտների բաշխման և տնտեսական աճի միջև կապի բնույթը միանշանակ չէ և կախված է դիտարկվող ժամանակահատվածից:
- ՀՀ կառավարության կարճաժամկետ,

միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության փաստաթղթերում աղքատության կրճատումը և եկամուտների բաշխման անհավասարության մեղմումը մատնանշվում են որպես սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններ: Որպես մարդկային կապիտալի զարգացման գրավական նպատակադրվում է վերացնել աղքատությունն և անհավասարություն ծնող պատճառները՝ սոցիալապես խոցելի աշխատունակ խավերի համար կրթության և աշխատանքի հասանելիության ապահովման միջոցով:

- Եկամուտների բաշխման անհավասարության մեղմմանը միտված սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցքային մեխանիզմներից ուղղակի և կարճաժամկետ ազդեցությամբ էական դերակատարում ունեն պետական տրանսֆերտները, մասնավորապես՝ կենսաթոշակները և ընտանեկան կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները: Իսկ անուղղակի, սակայն երկարաժամկետ ազդեցությամբ առանձնանում են կրթական և առողջապահական ոլորտին ուղղվող պետական ծախսերը:
- 2008-2016 թվականների ընթացքում կենսաթոշակների վճարումը հնարավորություն է տվել կրճատել անհավասարության մակարդակը տարեկան մոտ 6.9 տոկոսային կետով, իսկ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները՝ 1.4 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում պետական տրանսֆերտները հնարավորություն են տվել կրճատել աղքատության մակարդակը տարեկան միջինը 15.1 տոկոսային կետով:
- Աշխատանքում եկամուտների բաշխման ուսումնասիրության տնտեսամաթեմատիկական մոտեցումները դասակարգվել և ներկայացվել են ըստ 4 խմբերի՝ անհավասարության ինդեքսներ, միկրոտնտեսական հետազոտության մեթոդներ, մակրոտնտեսական

հետազոտության մեթոդներ և խառը մեթոդներ: Վերջիններիս համեմատության արդյունքում նպատակահարմար է համարվել հետազոտությունն իրականացնել և՛ անհավասարության ինդեքսների, և՛ միկրոտնտեսական հետազոտության մեթոդների, մասնավորապես՝ Օքսակա-Բլինդերյան մեթոդի կիրառությամբ:

- 2009 թվականի տնտեսական ճգնաժամը էական և շարունակական ազդեցություն է ունեցել ՀՀ-ում բնակչության եկամուտների բևեռացվածության խորացման վրա. 2004-2006 թվականներին անհավասարության մակարդակը մեծ տեմպերով կրճատման միտում է դրսևորել, իսկ 2009 թվականից ի վեր շարունակաբար սկսել է աճել:
- Հայաստանում բևեռացվածության մակարդակը թեև վերջին տարիներին շարունակաբար ավելացել է, այնուամենայնիվ հարևան երկրների և Ռուսաստանի համեմատությամբ սոցիալական բևեռացվածությունը բավականին մեղմ է:
- ՀՀ բնակչության եկամտային բևեռացվածության 91.8 տոկոսը պայմանավորված է եկամուտների 3 տեսակներով՝ վարձու աշխատանքից ստացվող եկամտով (70.8 տոկոս), ինքնազբաղվածությունից եկամտով (12.4 տոկոսը) և տրանսֆերտներով (8.6 տոկոսը): Ընդ որում, ընդամենը եկամտում վարձու աշխատանքից եկամտի կշռի 1 տոկոս աճը հանգեցնում է անհավասարության մակարդակի 0.18 տոկոս ավելացմանը:
- Անհավասարության մեղմման տեսանկյունից էական են պետական տրանսֆերտների դերը՝ ընդամենը եկամտում պետական տրանսֆերտների 1 տոկոս աճը հանգեցնում է անհավասարության կրճատմանը 0.13 տոկոսով: Միաժամանակ կարևոր են և՛ թոշակների, և՛ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների դերը, սակայն թոշակների ազդեցությունը շատ ավելի մեծ է. ընդամենը եկամտում թոշակների կշռի 1 տոկոս աճը

հանգեցնում է անհավասարության մակարդակի 0.10 տոկոսով կրճատմանը, իսկ ընտանեկան նպաստի 1տոկոս աճը՝ 0.03տոկոսով կրճատմանը:

- Հիմնվելով անհավասարության մակարդակի ըստ եկամտի տեսակների էլաստիկության գործակիցների վրա՝ մշակվել են անհավասարության մակարդակի կանխատեսման սցենարներ: Անկախ սցենարի ընտրությունից, ՀՀ-ում անհավասարության մակարդակն առաջիկա տարիների ընթացքում աճի միտում է դրսևորել:
- 2016 թվականին անհավասարության մակարդակի վրա բնակավայրի տեսակի, ինչպես նաև ՀՀ վարչատարածքային միավորների ազդեցությունը զգալիորեն աճել է՝ կազմելով համապատասխանաբար 7.6 տոկոս և 12.5 տոկոս: Ընդհանուր անհավասարության մակարդակի ձևավորման մեջ մասնակցության բարձր մակարդակով առանձնանում է Երևան քաղաքը, իսկ եկամտային բևեռացվածության խորությամբ՝ գյուղական բնակավայրերը: Մարզային կտրվածքով անհավասարության մակարդակն ավելի խորն է Կոտայքի և Արմավիրի մարզերում:
- 2016թվականին 2008թվականի համեմատությամբ ՏՏ մեկ շնչի հաշվով միջին եկամուտն աճել է մոտ 1.9 անգամ: Այդ փոփոխությունում նշանակալի դերակատարում են ունեցել ՏՏ կառուցվածքի փոփոխությունը (անդամների թվաքանակի կրճատումը ի հաշիվ երեխաների կշռի նվազման), ՏՏ գլխավորի կրթական մակարդակի բարձրացումը և զբաղվածների կառուցվածքում բարձրագույն կրթությամբ անձանց կշռի աճը:
- Անհավասարության մակարդակի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից ՏՏ անդամների կրթական մակարդակի և տնտեսական ակտիվության դերը շատ ավելի ակնառու է, քան ՏՏ դեմոգրաֆիական կառուցվածքինն է: 2016 թվականին ՏՏ-ում բարձրագույն կրթությամբ զբաղված անդամի առկայությամբ պայմանավորված է եղել անհավասարության

մակարդակի 13.7 տոկոսը, իսկ ՏՏ գլխավորի բարձրագույն կրթություն ունենալու հանգամանքով՝ 7.3 տոկոսը: Ընդ որում, աշխատանքում դիտարկված բոլոր գործոնների կրթության գործոնի ազդեցությունը անհավասարության մակարդակի վրա ամենամեծն է:

- Աշխատությունում առաջարկվել է ՀՀ բնակչության ըստ եկամուտների դասակարգման նոր մոտեցում, որի հիմքում ոչ թե պարզապես աղքատության բացարձակ գիծն է, այլև պայմանական խմբերում միջին եկամտից նվազագույն շեղումը: Ըստ այս մոտեցման ցածր եկամտային խումբը ներառում է բնակչության 70 տոկոսը, միջին եկամտային խումբը՝ 24 տոկոսը, իսկ բարձր եկամտային խումբը՝ 6տոկոսը:Ընդ որում,ցածր եկամտային խմբի ՏՏ մեկ չափահասի հաշվով միջին ամսական եկամուտը կազմում է 47,258 դրամ, միջին եկամտային խմբի դեպքում՝ 125,193 դրամ, իսկ բարձր եկամտային խմբի դեպքում՝ 250,554դրամ:
- Աղքատ և ոչ աղքատ խմբերի ՏՏ մեկ շնչի հաշվով միջին եկամուտների միջև առաջացած ճեղքը պայմանավորված է հետևյալ տարբերություններով՝ աղքատ ՏՏ-ները ավելի երիտասարդ են, աղքատ ՏՏ-ներում գործազուրկների քանակը շատ է, իսկ զբաղվածների թիվը՝ քիչ,վարձու աշխատանքից, ինքնազբաղվածությունից, բարեկամներից/հարազատներից ստացվող եկամուտների առկայությունը ոչ աղքատ ՏՏ-ներում ավելի շատ է, աղքատ ՏՏ-ների անդամների կրթական մակարդակն ավելի ցածր է:

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Հակոբյան Լ., «ՀՀ բնակչության եկամուտների կառուցվածքի վերլուծությունը», ՀՊՏՀ 25-րդ «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» գիտաժողովի (2015թ. նոյեմբերի 11-13) նյութեր II, Երևան 2015,էջ 554-560:

2. Հակոբյան Լ., «ՀՀ բնակչության եկամուտների բաշխումը կարգավորող գործիքակազմը», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածու-2016, Երևան 2016, էջ 109-117:
3. Հակոբյան Լ., «ՀՀ բնակչության սոցիալական բևեռացվածության գնահատումն ըստ եկամտի ձևավորման աղբյուրների», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»գիտական հոդվածների ժողովածու-2017, Երևան 2017, էջ 374-378:
4. Հակոբյան Լ., «ՀՀ բնակչության եկամուտների շարժի գնահատումն ըստ տնային տնտեսությունների առանձնահատկությունների» Ֆինանսներ և էկոնոմիկահանդես N9-10 (205-206), Երևան 2017, էջ 141-144:
5. Հակոբյան Լ., «ՀՀ բնակչության եկամուտների բաշխման վրա տարածաշրջանային գործոնի ազդեցության գնահատումը», ՀՊՏՀ 27-րդ «Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ» գիտաժողովի (2017թ. նոյեմբերի 22-24)նյութեր, Երևան 2018, էջ 503-508:
6. Հակոբյան Լ., «ՀՀ բնակչության դասակարգումն ըստ խավերի», ԱՅԼԸՆՏՐԱՆՔ գիտական հանդես հունվար-մարտ, Երևան 2018, էջ 102-106:

АКОПЯН ЛИЛИТ ГАРИКОВНА

ЭКОНОМИКО-МАТЕМАТИЧЕСКОЕ МОДЕЛИРОВАНИЕ И ПРОГНОЗИРОВАНИЕ РАСПРЕДЕЛЕНИЯ ДОХОДОВ НАСЕЛЕНИЯ РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.08-“Математическая экономика”.

Защита диссертации состоится 28-го июня 2018 г., в 13: 30 на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете. Адресу: 0009, г. Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Основная цель диссертации моделирование распределения доходов населения Армении и получение соответствующие оценки с помощью применения методов экономико-математического моделирования. С этой целью в диссертации были изучены и решены следующие задачи:

- исследовать основные принципы, подходы и методы анализа распределения доходов населения,
- обосновать и представить важность исследования распределения доходов с точки зрения экономического развития страны, подчеркнув необходимость изучения распределения доходов для эффективной разработки и осуществления социально-экономической политики страны,
- проанализировать социально-экономическую политику проводимую в РА, представить основные инструменты, применяемые для регулирования распределения доходов,
- исследовать и представить основные методы используемые в мировой практике для экономико-математического моделирования и оценки распределения доходов,
- определить основные факторы влияющие на распределение доходов населения РА, оценить характер и степень их воздействия,
- прогнозировать развитие уровня неравенства распределения доходов в РА.

Объектом исследования являются доходы населения РА. Предметом исследования являются экономико-математические методы используемые для оценки распределения доходов населения РА.

Основные результаты исследования и научная новизна заключаются в следующем:

- Проанализированы основы социально-экономической политики РА с точки зрения распределения доходов населения. Выявлен характер взаимодействия между основными инструментами политики и уровнем неравенства, оценена эффективность политических мер.
- Экономико-математические методы исследования распределения доходов классифицированы и представлены 4 группами: индексы неравенства, методы микроэкономических исследований, методы макроэкономических исследований и смешанные методы (комбинации методов микро-макро исследований). Проведен сравнительный анализ методов.

- Предложена последовательность экономико-математических шагов (сочетающих индексы неравенства и метода Оксаки-Блайндера) для исследования и оценки уровня неравенства. Проведено комплексное исследование и оценка распределения доходов в РА, на микро уровне оценивалось влияние основных социально-экономических факторов определяющих непропорциональное распределение доходов, даны количественные оценки.
- Разработаны сценарии прогнозирования уровня неравенства, которые основаны на коэффициентох эластичности уровня неравенства по типам доходов и прогнозам роста номинального ВВП. Оценены ожидаемые изменения неравенства распределения доходов.
- Предложен новый подход к классификации населения Армении по доходам на основе минимального отклонения от среднего дохода в группах населения. В соответствии с этим население Армении было классифицировано по группам с низким, средним и высоким уровнем дохода.

LILIT GARIK HAKOBYAN

ECONOMIC-MATHEMATICAL MODELING AND FORECAST OF INCOME DISTRIBUTION OF RA POPULATION

Abstract of the Dissertation for pursuing the degree of PhD in Economics in the field 08.00.08 - "Mathematical Economics".

The defense of the Dissertation will take place on June 28, 2018, at 13:30 at the meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia acting at the Yerevan State University.
Adress: 52, Abovyan st., Yerevan 0009.

ABSTRACT

The main goal of the dissertation is to model the income distribution of RA population and to obtain appropriate assessments by using economic-mathematical methods. In order to achieve that goal the following problems were set and solved:

- to study the basic principles of the population's income distribution analysis, approaches and methods proposed by different economists over the time,
- to substantiate and present the importance of imcome distribution analysis from the aspect of country's economic development, to highlight the need for income distribution analysis to effectively elaborate and work out the country's socio-economic policy,
- to analyze the socio-economic policy carried out in RA by introducing the toolkit for managing

income distribution,

- to study and introduce the methods and approaches used worldwide for economic-mathematical modeling and assessment of income distribution,
- to reveal the main factors influencing on RA population's income distribution, their peculiarities, assess the nature and the extent of their impact,
- to predict the development of the inequality level of income distribution in RA.

The object of the research is the income of RA population. The subject of the research is the economic-mathematical methods used to assess the income distribution of RA population.

The main results and novelty of the research are:

- An analysis of the socio-economic policy framework has been carried out in RA from the aspect of the population's income distribution. The neture of the interaction between the main police instruments used and the inequality lavel of income distribution has been revealed, and the effectivness of policy measeares has been assessed.
- The economic-mathematical approaches to the income distribution analysis are classified and presented by 4 groupes: inequality indexes, microeconomic research methods, macroeconomic research methods amd mixed methods (combination of micro-macro research methods). A comparative analysis of the methods has been made.
- A sequence of economic-mathematical steps has been proposed for studying and assessing the inequality level in condition with inequality indexes and Oaxaca-Blinder's method. A comprehensive analysis and assessment of income distribution in RA has been carred out. The impact of the main socio-economic factors determining the income distribution has been assessed on the micro level, quantitative assessments have been given.
- Inequality level forecasting scenarios have been worked out based on the inequality level elasticity coefficients according to income types and nominal GDP growth forecasts. Assessments of expected changes in the income distribution have been made.
- A new approach of the classification of the Armenian population by income has been proposed based on the smallest deviation from the average income in the conventional population groups. According to which the population of Armenia has been classified into low, middle and high income groups.